ԵԴ2/8875/02/23

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**27 հունիսի 2023թ.** **ք. Երևան**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, ծանոթանալով «Մարմարի Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

## Պ Ա Ր Զ Ե Ց

21.06.2023 թվականին «Մարմարի Աշխարհ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ ան՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Երևանի քաղաքապետարանի և «Մարմարի Աշխարհ» ՍՊԸ-ի միջև 19.12.2022 թվականին կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/1-2 ծածկագրով ծառերի և թփերի մատակարարման պայմանագրի 26.04.2023 թվականի միակողմանի (մասնակի) լուծելու մասին և մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու 10.05.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը դատավորին է հանձնվել 22.06.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

# ՈՐՈՇԵՑ

«Մարմարի Աշխարհ» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականին օգոստոսի 09-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**ԴԱՏԱՎՈՐ Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**